Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արմավիրի մարզի << Արևադաշտի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-իֆիզկուլտուրա(22դասաժամ),անգլերեն(22դասաժամ),արվեստ (2դասաժամ), կենսաբանություն(8 դասաժամ), ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3Х4 չափի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ(դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն (Ձև 5),
6) այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7) ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),
9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024 թվականի սեպտեմբերի 06-ից մինչև սեպտեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր ժամը 9:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024 թվականի սեպտեմբերի 24-ին՝ ժամը 14:00-ին ՀՀ Արմավիրի մարզի <<Արևադաշտի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում.հասցեն՝ Արմավիրի մարզ,գյուղ Արևադաշտ, Գևորգ Չաուշի 1 Տեղեկությունների համար զանգահարել (041) 04 23 44

<< Արևադաշտի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի տնօրենություն